ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏ

Ք. Երևան 26 դեկտեմբեր 2018թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը (այսուհետ՝ Կողմ-1), ի դեմս աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, մի կողմից, ով գործում է ՀՀ կառավարության 2007թ. դեկտեմբերի 27-ի N 1531-Ն որոշմամբ հաստատված Ծառայության կանոնադրության հիման վրա, և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը (այսուհետ՝ Կողմ-2), ի դեմս Վարչության աշխատակազմի ղեկավար Վահագն Հարությունյանի, մյուս կողմից ով գործում է վարչության Կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն վարչական ակտը հետևյալի մասին:

1.Սույն ակտով Կողմ-1-ը պարտավորվում է Կողմ-2-ի հետ 2006 թ. մայիսի 15-ին կնքված <Ոչ բնակելի տարածքի վարձակալության> թիվ 112/05 պայմանագրով նախատեսված՝ ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի Շահումյան 5 հասցեում գտնվող շենքից Կողմ-1-ին վարձակալությամբ տրամադրված ոչ բնակելի տարածքի 2017թ. երկրորդ կիսամյակի և 2018 թվականի հունվար, փետրվար ամիսների վարձավճարը ընդամենը՝ 88800 (ութսունութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամի չափով <Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին> ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պահպանման ծախսերի համար հատկացված միջոցներից փոխանցել Կողմ-2-ի հաշվարկային հաշվին:

2. Սույն ակտը գործում է մինչև 2018 թվականի փետրվարի 25-ը:

3. Սույն ակտով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Սույն ակտի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Սույն ակտով սահմանված պայմանների փոփոխումը, ակտում լրացումը կամ գործողության դադարեցումն իրականացվում է կողմերի գրավոր համաձայնությամբ:

6. Սույն ակտը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայություն	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
Հասցե՝ ք. Երևան 0010, Նալբանդյան 13	Հասցե՝ ք. Երևան 0010, Տիգրան Մեծի 4
Գանձապետական հաշվի համարը՝ 900011556355	Գանձապետական հաշվի համարը՝ 900005220117
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի ղեկավար՝	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի ղեկավար՝
Մ. Մինասյան Կ.Տ	Վ. Հարությունյան Կ.Տ